ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր Համալսարանը հնի և նորի համալիր գաղափարակիրն է

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՃՇՀԱՀ-Ի ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»-ՅԻ ՄԻՋԵՎ

Կարևորելով գործընկերության ու համագործակցության դերը կրթական, ֆինանսատնտեսագիտական ոլորտներում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպության միջև կնքվեց համագործակցության հուշագիր:

Հուշագրի շրջանակներում՝ համալսարանում համատեղ կմշակվեն «Հաշվապահական հաշվառում և հարկում» կրթական ծրագրի բարելավմանն ուղղված առաջարկություններ, կկազմակերպվեն և կանցկացվեն ուսումնական պրակտիկաներ կազմակերպությունում, համատեղ կիրատարակվեն ուսումնամեթոդական նյութեր:

Հուշագիրը ենթադրում է նաև կազմակերպության աջակցությունն ուսանողներին՝ նպաստների, կրթաթոշակների և այլ ձևերով, ինչպես նաև համալսարանի շրջանավարտներին աշխատանքի ընդունումը՝ ՀՀ օրենսդրությանը և իր ներքին կանոնակարգերին համապատասխան:

ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանի և «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա»-յի նախագահ Վահագն Համբարձումյանի կողմից կնքված հուշագիրը կգործի անժամկետ:

ԱՅՑ՝ ԲՈԼՈՆԻԱ. ՌԵԿՏՈՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԱԳԵՑԱԾ ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հունիսի 24-27-ը Բոլոնիայում էին գտնվում աշխարհի առաջատար համալսարանների շուրջ 212 ռեկտոր: Նրանց բոլորին մեկտեղել էր Բոլոնիայի պրոցեսի մեկնարկման 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները:
Մասնակիցների թվում էր նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը:
Միջոցառումների մեկնարկը տրվեց Բոլոնիայի համալսարանի ամենահին մասնաշենքից՝ Արքիջինազիոյից, որտեղից բոլոր ռեկտորները՝ հատուկ հանդերձանքով, շարժվեցին դեպի Կենտրոնական հրապարակում գտնվող Թագավորական պալատ:
Մինչև բուն միջոցառման անցկացումը՝ առավոտյան, Բոլոնիայի համալսարանում էին հավաքվել Իտալիայի համալսարանների ռեկտորներն՝ ամփոփելու անցնող տարվա աշխատանքները: Հատկանշական է, որ իտալացի ռեկտորների «փակ» հավաքին առանձնահատուկ հրավիրված էր նաև մեր համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը:
Այստեղ ռեկտոր Գալստյանը հանդիպումներ ունեցավ Բոլոնիայի համալսարանի ռեկտոր Ֆրանչեսկո Ումբերտինիի և պրոռեկտոր Էնրիկո Սանջիորջի հետ, որոնց հետ քննարկեց 2 համալսարանների ապագա համագործակցության հնարավորությունները:
Ռեկտորների նեղ կազմով հանդիպումը լայն ու հեռանկարային էր նաև մեր, Միլանի պոլիտեխնիկի և Հռոմի Լա Սապիենցա համալսարանների համար: Նշված բուհերի ռեկտորների հետ Գ. Գալստյանը քննարկեց Դիզայնի և Ճարտարապետության ֆակուլտետների միջև համագործակցության պայմանագրեր կնքելու հնարավորությունը՝ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի վերաբերյալ: Արդեն օրվա երկրորդ կեսին մեկնարկեց միջոցառումը, որն իր ողջույնի խոսքով բացեց Բոլոնիայի համալսարանի ռեկտոր Ֆրանչեսկո Ումբերտինին:

Ելույթներով հանդես եկան **ՅՈՒՆԵՍԿՈ–յի ընդհանուր կրթության դեպարտամենտի տնօրեն Ստեֆանիա Ձիաննին,** Եվրոպական համալսարանների ասոցիացիայի նախագահ Մայքլ Մերֆին, Եվրոպական ուսանողական միության նախագահ Ադամ Գաժեկը և այլք: Իսկ արդեն փակման արարողությունը վստահված էր հատուկ հյուր, **Իտալիայի կրթության, համալսարանների և հետազոտությունների նախարար Մարկո Բուզետտիին:**

Համաժողովում հնչած ելույթները հիմնականում ուղղված էին եվրոպական ակադեմիական բարձրագույն կրթական համակարգի վերելքին, զարգացող հասարակարգերում ակադեմիական և դրանց վերաբերող այլ արժեքներին, կայուն զարգացման նպատակով բարձրագույն կրթության դերի բարձրացմանը, ուսանողական կենտրոնացված էկոհամակարգերի նախագծմանը:
Հաջորդ օրերն արդեն հագեցած էին ճանաչողական շրջայցերով ու հանդիպումներով: Ռեկտոր Գալստյանը՝ Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Մարիանջելա Վանդինիի և հայազգի դասախոս, պրոֆեսոր Աննա Շիրինյանի ուղեկցությամբ, այցելեց համալսարանի՝ Ռավեննայում գտնվող Մշակութային ժառանգության պահպանման ֆակուլտետ: Այստեղ ծանոթացավ նաև 3D լաբորատորիայի և Հուշարձանների հետազոտության լաբորատորիայի աշխատանքներին ու աշխատելաոճին:
Հաջորդ կանգառը Չեզենա քաղաքն էր, որտեղ գտնվում է Բոլոնիայի համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետը: Շենքային պայմաններին, կրթական ծրագրերին ու լաբորատորիաներին ծանոթանալուց հետո ռեկտոր Գալստյանը հանդիպեց ֆակուլտետի փոխդեկան Ֆեդերիկո Ֆալլավոլիտայի հետ: Քննարկման թեմաների շարքում էր նաև մոտ ապագայում մշակութային ժառանգության կենտրոնի ստեղծմանը վերաբերող հարցերը:

ԲԱՑ ՍՏՈՒԴԻԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կայացավ Բաց ստուդիայի թվով 19-րդ հանդիպումը: Հանդիպումը սկսվեց նախագծի հեղինակ, Դիզայնի ֆակուլտետի դասախոս Լիլիթ Ումեդյանի բացման խոսքով, որով ներկայացրեց զրույց-շնորհանդեսը վարող հյուրին՝ Աննա Գարգարյանին: Նա HAYP POP UP ցուցասրահի և IN SITU արվեստի գործակալության հիմնադիրը և ՀԲԸՄ ստեղծարար նախագծերի խորհրդատուն է: «Համադրման սահմանները. շարժական և այլընտրանքային ցուցասրահներ» խորագրով հանդիպմանն Աննա Գարգարյանը

կիսվեց համադրման նոր սահմանների բացահայտման, արվեստի հետ առնչվելու նոր հնարավորությունների կիրառման և մոդելներ ստեղծելու իր փորձով:

Հետաքրքիր և նոր գիտելիքներ հաղորդող ճանաչողական զրույցն ավարտվեց մասնակիցների կողմից տրված բազմաթիվ հարցերով, որոնց բանախոսը սիրով և սպառիչ պատասխանեց:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԶԻՆՎԱԾ ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ԹԱԿՈՒԵՑԻՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՓՈՒԼ

NUACA
2019

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՆ ԱՄՓՈՓՎԵՑ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ ՈՒ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ

Ինչ ամառ՝ առանց ամառային ուրախ, ուսուցողական և ակտիվ ճամբարի: ՃՇՀԱՀ-ի Ուսանողական խորհուրդն այս տարի էլ հոգացել էր, որպեսզի համալսարանի, ՃՇՀԱՀ հենակետային քոլեջի ուսանողներն ու Մ.Աբեղյանի անվան ավագ դպրոցի աշակերտներն ունենային անմոռանալի հանգիստ:

Հուլիսի 15-20-ը՝ Ստեփանավանի «ԼՈՌԷ» ակտիվ հանգստի և ժամանցի կենտրոնում, շուրջ 100 երիտասարդ մասնակցեցին «Երիտասարդ ինժեներների հավաք 2019»-ին: Հավաքի հատուկ հյուրերն էին «Էմիլի Արեգակ» կենտրոնի սաները: Ներբուհական վրանային ճամբարի նպատակն էր գիտահանրամատչելի սեմինարների, ինտելեկտուալ խաղերի, ավանդական պարերի միջոցով հարստացնել ուսանողների գիտելիքների պաշարը և անմիջական շփման արդյունքում միավորել տարբեր ֆակուլտետների ուսանողներին:

Ճամբարային օրակարգը դասական էր՝ ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, շախմատի առաջնություն, երգ ու պար:

«Երիտասարդ ինժեներների հավաք 2019»-ի փակման հանդիսավոր արարողության ընթացքում ճամբարականները բաժանվել էին 8 ջոկատների, որոնք կրում էին հայկական արքայատոհմերի և իշխանական տների անունները՝ Երվանդունիներ, Արշակունիներ, Արտաշեսյաններ, Բագրատունիներ, Մամիկոնյաններ, Արծրունիներ, Հայկազունիներ և Սյունիներ: Որոշվեց 1-3 հորիզոնականները զբաղեցրած ջոկատները: Արտաշեսյաններ՝ 22 միավոր, պատվավոր 1-ին հորիզոնական: Արշակունիներ՝ 20 միավոր, 2-րդ հորիզոնական: Արծրունիներ՝ 18 միավոր, 3-րդ հորիզոնական:

Փակման արարողությանը ներկա էին ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, Ուսանողական խորհրդի պատվավոր նախագահ Հովսեփ Հովեյանը, Կառավարում և տեխնոլոգիաներ ֆակուլտետի դեկան Տիգրան Մարտիրոսյանը: Հավաքի ղեկավար, Ուսխորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը և ռեկտոր Գագիկ Գալստյանը շնորհավորեցին մրցույթների արդյունքում իրենց լավագույնս դրսևորած ջոկատներին և պարգևատրեցին հաղթական գավաթով, մեդալներով ու պատվոգրերով: Ճամբարակա-նները հանդես եկան գեղեցիկ պարային ելույթով, այնուհետև հյուրերին ներկայացրեցին ճամբարի կառուցվածքը և առօրյան:

ԵՐԲ ՁԱՆՔԵՐԸ ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ՝ ՆՎԵՐԸ ՍԻՐՈՎ Է ԼԻՆՈՒՄ

Ապագա ճարտարապետների նվերը ուրախացրել և ոգևորել է ԴԱԱ հիվանդանոց-դպրոցի երեխաներին: Նրանց անկեղծ խանդավառությունը ամենամեծ շնորհակա-լությունն է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալ-սարանի (ՃՇՀԱՀ) և Ստամբուլի ՄԵՖ համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողներին և ծրագրի կազմակերպիչների համար:

«Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնությամբ «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ ԴԱԱ հիվանդանոց-դպրոցի բակում բացվեց էկոլոգիապես մաքուր՝ փայտե խաղահրապարակ, կառուցված ՃՇՀԱՀ-ի և ՄԵՖ համալսարանի ուսանողների նախագծով և նրանց ներուժով:

Խաղահրապարակի բացումը իր շուրջն էր համախմբել ՀՀ ԱԳՆ, ԿԳՄՍՆ, նշանավոր ճարտարապետների, առողջապահության ոլորտի, ՀԿ-ների ներկայացուցիչ-ներին: Միջոցառմանը իրենց շնորհակալական խոսքը ասացին Ստամբուլի ՄԵՖ համալսարանի դասախոսներ և միջոցառմանը ներկա այլ հյուրեր:

««Հրանտ Դինք» հիմնադրամի այս ծրագիրը քաղաքական չէ: Ինչպես գիտեք քաղաքական ծրագրերը հաճախ տարանջատող են, իսկ մշակույթային, կրթական ծրագրերը միավորող: Սրանով է հետաքրքիր այս ծրագիրը: Մենք հույս ունենք, որ այն կլինի շարունակական և կնպաստի երկու երկրների համալսարանների համագոր-ծակցությանը:»,- շնորհակալություն հայտնելով բոլոր կողմերին ծրագրի իրականացման համար խաղահրապարակի բացմանը ասաց ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան Հասարա-կայնության հետ կապերի բաժնի տնօրեն Ռոբերտ Անդերսոնը:

«Ամառային դպրոց» ծրագրով խաղահրապարակի նախագծման և կառուցման աշխատանքներին ներգրավված են եղել ՄԵՖ համալսարանի 10 ուսանող, 2 դասախոս: ՃՇՀԱՀ-ից՝ 10 ուսանող, 2 դասախոս, աշխատանքներին մասնակցել են 5 ասիստենտ:

Երեխաները նույնպես իրենց երախտիքի խոսքը հայտնեցին՝ փոքրիկ համերգային ծրագրով: Նրանց անկեղծ կատարումը հուզեց ներկաներին և առանձնակի շուք և տրամադրություն պարգևեց միջոցառմանը:

ՃՇՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանի անունից համալսարանի Միջազգային կապերի գծով պրոռեկտոր Վարդգես Եդոյանը իրականացված ծրագրի համար շնորհակալություն հայտնեց «Հրանտ Դինք» հիմնադրամին, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատանը և առանձնակի կարևորեց ուսանողների և նրանց հետ աշխատող

դասախոսների աշխատանքը. «Ամռան այս շոգ օրերին ուսանողները այս փոքրիկ շինհրապարակում աշխատաում էին մեծ ոգևորությամբ, կյանքի կոչելով իրենց նախագիծը: Այս խաղահրապարակը կառուցված է սիրով:» Միևնույն ժամանակ պրոռեկտորը հիշեցրեց, որ ուսանողները այս նույն ծրագրով, նույն ոգևորությամբ անցած տարի ամռանը աշխատեցին Ստամբուլում:

«Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնած «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում 2018-ին ՃՇՀԱՀ-ի ուսանողները Ստամբուլում ՄԵՖ համալսարանի Ճարտարապետական ֆակուլտետի ուսանողների հետ միասին նախագծել և իրենց ջանքերով կառուցել են խաղահրապարկ Ստամբուլում բնակվող Հայաստանի քաղաքացի միգրանտ երեխաների համար՝ «Հրանտ Դինք» անունը կրող դպրոցի բակում:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BIM) ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Կենսագործունեության և տնտեսության բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ մասնակցությունն այսօր պահանջված է ամբողջ աշխարհում: Հարկ է նշել, որ ցանկացած ոլորտի առաջընթացի, ձեռքբերումների գնահատականը այլևս կախված է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման աստիճանից:

Բացառություն չէ նաև քաղաքաշինության ոլորտը: Քաղաքաշինության մեջ այսօր շատ հատկանշական և կիրառելի է շենքերի տեղեկատվական մոդելավորման համակարգի ներդրումը, որն այս ոլորտում կբերի լուրջ բարեփոխումներ և առնչվելով

քաղաքաշինության ոլորտի բոլոր գործառույթներին՝ սկսած նախագծային աշխատանք-ներից, փորձաքննությունից, շինարարությունից, վերջացրած՝ ավարտուն շենքերի շահագործմամբ:

Շինությունների տեղեկատվական մոդելավորումը՝ Building Information Modeling (BIM), նորարարական տեխնոլոգիա է, որը մի քայլ է ոլորտի թվայնացման և զարգացումների համապատասխանեցման ուղղությամբ: Առանց այս համակարգի ներդրման՝ այսօր անհնար է պատկերացնել վերը նշված գործառույթների արդյունավետ, որակով և ժամանակին իրականացման խնդիրները:

Ամբողջ աշխարհում սա արդեն լայնորեն տարածված համակարգ է: Մեր երկիրը նույնպես ձեռնպահ չէ այս նորարարությունից և փորձում է իր առաջին քայլերն անել: Հատկանշական և պատվաբեր է, որ այդ մեծ գործի առաջնորդության հեղինակը մեր համալսարանն է:

Հենց այս համակարգի ներդրումն էր տիկին Ղազարյանի ատենախոսության թեման, որը, գերազանց նախապաշտպանությունից հետո, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ ու հրավերով, քննարկման էր դրվել նաև կոմիտեում: Տեղին է նշել, որ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Քաղաքաշինության կոմիտեի միջև շարունակական ակտիվ և իրատեսական քննարկումներ էին ծավալվում շինարարության գնագոյացման հարցերի շուրջ, և հենց այդ քննարկումների ժամանակ կոմիտեի ներկայացուցիչներին հայտնի դարձավ, որ մեր համալսարանում լուրջ քայլեր են կատարվում BIM համակարգի ներդրման ուղղությամբ:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեում վերոնշյալ BIM համակարգի ներդրման անհրաժեշտության, կիրառման և տարածման ճանապարհային քարտեզի՝ տիկին Ղազարյանի կողմից հանգամանալից ներկայացումն արժանացավ հավանության: Արդյունքում՝ առաջարկվեց Քաղաքաշինության կոմիտեի և մեր համալսարանի ներկայացուցիչների հետ միասին ստեղծել աշխատանքային խումբ՝ ներգրավելով նաև համապատասխան մասնագետների, և մշակել ծրագիր BIM տեխնոլոգիաների ընդունման և կիրառման աշխատաքերի համակարգման համար:

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԸ՝ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՇԻՆԱՐԱՐ. ՆՇՎԵՑ ՀԱՅ ՇԻՆԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԸ

Օգոստոսի 9-ին մեծ հանդիսությամբ, ավանդաբար, նշվեց հայ Շինարարի մասնագիտական տոնը: Տոնական միջոցառմանը ներկա էին ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը, ՀՀ Շինարարների միության նախագահ, ՃՇՀԱՀ ռեկտոր Գագիկ Գալստյանը, ոլորտի ներկայացուցիչներ և հյուրեր:

Շնորհավորելով խորհրդանշական տոնի առթիվ՝ փոխվարչապետ Ավինյանը նշեց, որ հայ շինարարը մշտապես եղել է հասարակության ստեղծարար ուժերի առաջատար դիրքերում, իսկ շինարարները մարդիկ են, որոնք մեր երկրի տնտեսության շարժիչ ուժերից մեկի՝ շինարարության ոլորտի անձնուրաց նվիրյալներն են: Այս համատեքստում՝ փոխվարչապետը կարևորեց, հատկապես, սոցիալական ուղղվածություն ունեցող կառուցապատման ծրագրերի իրագործումը. «Կառավարությունը գիտակցում է, որ շինարարական ոլորտն առողջացնելու համար շատ կարևոր է լիցենզավորման ու գնագոյացման խնդիրների կարգավորումը, ինչպես նաև փոխկապակցված պետական շինարարության մրցույթների գործընթացի հիմնովին վերանայման հարցը: Նաև անհրաժեշտ է փորձագիտական ոլորտի բարելավում, որը կապահովի վաղվա կառույցների անվտանգությունը»:

«ՀՀ կառավարության կողմից առանձնակի հանդիսությամբ նշվող այս մասնագիտական տոնն ամրագրում է քաղաքաշինության բնագավառի և, հատկապես շինարարի կարևոր առաքելությունը երկրի տնտեսության զարգացման և առաջընթացի գործում»,-Հայաստանի շինարարների միության և անձամբ իր անունից շնորհավորական ուղերձում նկատեց Գագիկ Գալստյանը: Նա նշեց, որ, ՀՀ Շինարարների միությունը, օգտագործելով իր կապերը և գործարար հարաբերությունները, պետական գերատեսչական մարմնի աջակցությամբ նախաձեռնում և անում է հնարավորինը՝ մեր երկրում շինարարական տնտեսության ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով ներգրավելու միջազգային խոշոր շինարարական կազմակերպությունների, ինչն անխուսափելի է դարձնում երկրի շինարարական տնտեսության հետագա զարգացումը: Ինչ վերաբերվում է շինարարական կրթությանը և ապագայում նույնպես հայ շինարարի պատվավոր անունը բարձր պահելուն, ապա Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, ՀՀ Ճարտարապետների

պալատի և ՀՀ Շինարարների միության հետ համատեղ անում է առավելագույնը՝ թե՛ մեր երկրում, թե՛ երկրի սահմաններից դուրս, ուսանողների ճարտարապետաշինարարական որակյալ և արդյունավետ ուսումնական պրակտիկաները կազմակերպելու համար:

Փոխադարձ շնորհավորանքներին հաջորդեց ամենահատկանշականը. ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով՝ ՀՀ Շինարարների միության նախագահ, ՃՇՀԱՀ ռեկտոր Գագիկ Գալստյանին շնորհվեց ՀՀ վաստակավոր շինարարի պատվավոր կոչում:

Շինարարը մասնագիտություն չէ, այլ՝ առաքելություն, սեփական ազգին ու ժողովրդին շարունակաբար ծառայելու, արարելու սրբագույն պարտք: Այս համոզմունքով՝ հայ շինարարները միմյանց մաղթեցին քաջ առողջություն, մասնագիտական նորանոր հաջողություններ և գալիք սերունդներին մնայուն արժեքներ փոխանցելու անսպառ հաստատակամություն:

ԵՐԲ ՄԻԱՎՈՐՈՂՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է

Շինարարները միայն շենք ու շինություններ չեն կառուցում, նաև՝ ընկերություն, բարեկամություն ու համագործակցություն: Գուցե ասվածն անհավանական է թվում, բայց, երբ խոսքը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ապագա շինարարների մասին է, ամեն ինչ հնարավոր է դառնում:

Դեռևս անցյալ տարի, երբ Հայաստանի Շինարարների միության նախագահի ընտրություններին մեր երկիր, ապա նաև մեր համալսարան էին ժամանել եկել Բելառուսի Շինարարների միության նախագահ Նիկոլայ Շերեմետն ու խոշոր շինարարական կազմակերպությունների ղեկավարներ, ուրվագծվեց մեր ուսանողների՝ այս տարվա ամառային, աշխատանքային «արկածները» Բելառուսում, մասնավորապես՝ Մինսկում: Ղեկավար մարդկանց խոսքը՝ խոսք է, մեր՝ աշխատելու պատրաստակամությունն էլ՝ պողպատյա: Օրն եկավ և հուլիսի 1-ին, մեր համալսարանի շինարարության ֆակուլտետի 11 ուսանող՝ Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի դեկան Վալերիկ Հարությունյանի գլխավորությամբ, ուղևորվեցին Բելառուսի մայրաքաղաք: Այստեղ նրանց դիմավորեց անձամբ «МАПИД» շինարարական կազմակերպության տնօրեն Նիկոլայ Միլոշեվսկին, ում ուղեկցությամբ մեր համալսարանի պատվիրակները շրջայց կատարեցին շինարարական թանգարանում, շինհրապարակում և ծանոթացան տեխնիկային և շինարարական նյութերին: Թերևս, հարկ է նշել, որ «МАПИД»-ը Բելառուսում այն խոշորագույն կազմակերպություններից է, որի կողմից կառուցվում են Մինսկի բնակելի շենքերի շուրջ 50%-ը և, որի ենթակայության տակ են գտնվում ևս 17 առանձին շինարարական կազմակերպություն:

Ծանոթությունից և անձրևոտ Մինսկի քմահաճույքներին ադապտացվելուց հետո՝ հաջորդ առավոտյան մեր ուսանողներն արդեն շինհրապարակում էին: Ինչպես հմուտ վարպետներ՝ նրանք անխոնջ կատարում էին իրենց առջև դրված պարտականությունները՝ եզրաքարերի և սալիկների շարում, ավազի հարթեցում և բարեկարգման ուրիշ մի շարք աշխատանքներ: Խոստովանում են՝ մեկ ամիս տևած

արտադրական պրակտիկայի ընթացքում սովորել և աշխատել են հաճույքով՝ գնահատելով ընձեռված հնարավորությունն ու գիտակցելով մասնագիտական գիտելիքների հարստացման գործում վերջինիս կարևորությունը:

Մինսկյան աշխատանքային հուլիսն ամփոփվել է ընդունելությամբ, որին ներկա է եղել նաև Բելառուսի Շինարարների միության նախագահը, փոխադարձ շնորհակալություններով, «МАПИД» շինարարական կազմակերպության կողմից՝ դեկան Հարությունյանին և ուսանողներին տրված հավաստագրերով ու վկայականներով և շարունակական պրակտիկաների պարտադիր խոստմամբ:

ՄԵՆՔ ՔԵԶ ՀԵՏ ԵՆՔ, ԶԻՆՎՈ՞Ր

Սահմանը պահող զինվորի հոգսով ապրելն ու նրան քաջալերելը յուրաքանչյուրիս պարտքն է: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողների համար այն ոչ միայն սրբազան պարտք է, այլ նաև՝ հաճելի ավանդույթ:

Հերթական անգամ՝ Ուսանողական Խորհրդի նախաձեռնությամբ և «Հայերի Հաղթանակի ուղին» ծրագրի շրջանակներում, մերոնք Արցախում են: Զբոսանք՝ չնաշխարհիկ բնության գրկում, այցեր՝ պատմամշակութային վայրեր, և, իհարկե, զորամասեր. զինվորների հետ հանդիպումն ամենակարևորն է:

Մինչև օգոստոսի 15-ը մեր ուսանողները կշարունակեն բացահայտել ինչպես Արցախ աշխարհն, այնպես էլ զինվորներին մտահոգող խնդիրները:

ԱՎԵԼԻ ՄԵԾ ԹՎՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԱՎԵԼԻ ՀՈՒՍԱԼԻ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՊԱԳԱ

Եթե Դիմորդների ընդունելության բաժնի աշխատակիցները ժպտում են, ուրեմն՝ համալսարանում առաջիկա տարիներին ուսանողների ակտիվությունն ապահովված է:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում նոր ուսումնական տարին սկսվում է բարի և հեռանկարային լուրով. գրանցել ենք դիմորդների և, արդեն իսկ ուսանողների անհավանական աճ: Ինչպես բաժնի ղեկավար Հայկ Սարգսյանն ուրախությամբ հայտնեց, այս տարի ունենք 556 նոր ուսանող:

Եթե 2017-2018թթ-ին դիմորդների թիվը տատանվում էր 300-500-ի սահմաններում, ապա այս տարի մեր համալսարանում ուսանելու ցանկություն է հայտնել 574 դիմորդ, ինչը լուրջ փաստարկ է ինչպես մեր բուհի, այնպես էլ կրթության նկատմամբ մեծացած հետաքրքրության:

Հարկ է նշել, որ ընդունված 556 դիմորդներից 109-ը Ճարտարապետություն ֆակուլտետն է դիմել, 59-ը՝ Շինարարություն, 143-ը՝ Դիզայն, 195-ը՝ Կառավարում և տեխնոլոգիա և 50-ը՝ Քաղաքային տնտեսություն և էկոլոգիա:

Արդեն օրեր անց, սրտաբաց ու գրկաբաց կդիմավորենք փոքր, անվստահ, բայց ճիշտ ու մտածված քայլերով մեր համալսարան ոտք դրած նորաթուխ ուսանողներին և կասենք՝ բարի՛ գալուստ մեր մեծ ընտանիք:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐ ԵՎ ԲԱՐԻ՝ ԳԱԼՈՒՍՏ ԴՊՐՈՑ

Սեպտեմբերի 1-յան տրամադրությամբ այսօր մեծ ու փոքր աշակերտ և ուսանող շտապում էին իրենց կրթօջախները՝ կերտելու իրենց ապագան: Միգուցե, ասվածը պաթետիկ է, բայց գոնե ենթագիտակցորեն, բոլորն են վստահ, որ այսօրվանից նոր կյանք է սկսվում:

Օրը տոնական էր նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում: Արդեն հասուն, բարձր գիտակցությամբ և, որոշակիորեն, իրենց ապագա մասնագիտության մասին պատկերացում ունեցող 10-րդ դասարանցիներին ողջունեցին դպրոցի տնօրեն Վահրամ Սիմոնյանը, մանկավարժները, հյուրերն ու ծնողները:

Բոլորի մաղթանքն ու ցանկությունը մեկն էր՝ կարևորել գիտելիքի ուժը, սովորել անտրտունջ և դառնալ արժանավոր քաղաքացի ու բանիմաց մասնագետ:

Աշակերտներն էլ Գիտելիքի ու դպրության օրն ու նոր ուսումնական տարին նշեցին երգ ու պարով, ասմունքով, մեծ ոգևորությամբ և ակնկալիքներով:

ՃՇՀԱՀ-Ի ՄՄԿ ՔՈԼԵՋԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԻՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Գիտելիքի օրն ու նոր ուսումնական տարվա մեկնարկը տոնական և լուսավոր է նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Միջին մասնագիտական կրթության քոլեջում:

Գիտելիքի անպարտելի ուժը գիտակցելով և կրթության դերը կարևորելով՝ մեծաթիվ ուսանողներ առաջին անգամ ոտք դրեցին քոլեջ՝ ապագայի նկատմամբ մեծ ակնկալիքով ու հույսով:

Քոլեջի տնօրեն Անահիտ Հովհաննիսյանը շնորհավորելով ուսանողներին և ողջունելով նորեկներին՝ նշեց, որ գիտելիքն է մարդուն լուսավորողը, անկախացնողը, ստրկամտությունից ազատողը. «Գիտելիքը հզոր զենք է, մարդկային կապիտալ: Միայն գիտելիքի, հմտության ու կարողության միջոցով կարող ենք ուրվագծել և կառուցել մեր ապագան»: Գիտելիքը մեր հույսն է ու լույսն է՝ ամփոփեց խոսքը տիկին Հովհաննիսյանը՝ բոլորին մաղթելով բարի երթ:

ՄԵՆՔ #ԱՄԵՆՈՒՐԵՔ ԵՆՔ.
ԳՐԵ՞Ք, ԼՈՒՍԱՆԿԱՐԵ՞Ք ԵՎ ԱՍԵ՞Ք ԴՐԱ ՄԱՍԻՆ

Հայի ձեռագիրն #ԱՄԵՆՈՒՐԵՔ է, հայի ոտնահետքերն #ԱՄԵՆՈՒՐԵՔ են, հայի ձայնը խրոխտ, լսելի և ինքնավստահ է #ԱՄԵՆՈՒՐԵՔ:

Բառը պատահական չի: Ամենուրեք-ն այն աներևույթ վայրն է, որտեղ ապրում է հայի ոգին, հայի ստեղծագործությունն ու միտքը:

Հենց աշխարհասփյուռ հայությանը միավորելու, երկխոսություն հաստատելու և Հայաստանն աշխարհին ճանաչելի դարձնելու նպատակով արվեստագետներ Բիանկո-Վալենտե զույգը՝ Հայաստանում Իտալիայի դեսպանության աջակցությամբ, հղացավ «ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ է» նախագիծը:

Հայկական մշակույթն ուսումնասիրելու նպատակով Երևան ժամանած արվեստագետները, շփվելով մարդկանց ու պատմամշակութային վայրերի հետ, հասկացան, որ, անկախ աշխարհագրական սահմաններից, ժամանակի ընթացքում կրած ցավերից, պառակտումից և ազգերի բախումների արդյունքում թատերաբեմի վերածվելուց, հայերն ամենուրեք են և կապված են անտեսանելի, բայց շատ ամուր թելերով:

Այս նախագիծն այդ թելերը կդարձնի տեսանելի՝ ձեռքի ափի մեջ #ԱՄԵՆՈՒՐԵՔ գրվածքով լուսանկարի և այն #ԱՄԵՆՈՒՐԵՔ հեշթեգով սոցիալական ցանցերում տարածելու շնորհիվ: Այս յուրատեսակ գաղափարը կմիավորի և կնպաստի, որպեսզի

աշխարհի ցանկացած անկյունում ապրող հայ վկայի իր մասին և ասի՝ «այստեղ նույնպես հայեր կան»:

Ծրագրի մեկնարկը տրվեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից: Այստեղ նախագծի կազմակերպիչներն ուսանողներին ներկայացրեցին #ԱՄԵՆՈՒՐԵՔ-ի ողջ էությունը, կարևորությունը և նմանատիպ նախաձեռնության նախադեպերը: Դեռևս լսարանում՝ ուսանողներն արդեն շտապում էին իրենց ձեռքերը «զարդարել» խորհրդանշական #ԱՄԵՆՈՒՐԵՔ-ով, որպեսզի բակում սկսեին լուսանկարվել և շունչ տալ այս կարևոր գաղափարին:

Ճիշտ է, #ԱՄԵՆՈՒՐԵՔ-ը սկսվել է մեր համալսարանից, սակայն ներգրավել է ամբողջ քաղաքն ու մի շարք կառույցներ: Նախաձեռնությանն են միացել Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակը, Մխիթարյանների միաբանությունը, Միջխորհրդարանական միության Իտալիա-Հայաստան բարեկամության խումբը, IN SITU արվեստի գործակալությունը, ժամանակակից արվեստի ինստիտուտը, «Արտլաբ Երևան» ստեղծագործական կազմակերպությունը, Kond Gallery-ն, Լուսիկ Ագուլեցու թանգարանը:

Գաղափարակիրները լիահույս են, որ այսօրվանից #ԱՄԵՆՈՒՐԵՔ գրվածքով ձեռքերն ու պաստառները կողողեն համացանցը՝ հուշելով ու հիշեցնելով, որ հայերն #ԱՄԵՆՈՒՐԵՔ են: